

## Որակի հռչակագիր ճանապարհատրանսպորտային պատահարներ

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ճանապարհատրանսպորտային պատահարներ
0.2	Ոլորտը	Տրանսպորտ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին Բաժնի պետ Անահիտ Ներսիսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 582949 Էլ. փոստ՝ <a href="mailto:anahit_nersisyan@armstat.am">anahit_nersisyan@armstat.am</a> , <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a>
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) (քանակի, պատահարի վայրի և պատճառների և դրանց հետևանքով տուժածների թվաքանակի (գոհվածներ և վիրավորներ), տուժածների սեռատարիքային կազմի) վերաբերյալ:</p> <p>Ցուցանիշների հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 50-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:</p>
0.5	Օգտագործողները և կիրառումը	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:</p> <p>Ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները կիրառվում են տրանսպորտի, մասնավորապես ճանապարհային երթևեկության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:</p>
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով ՀՀ ԿԱ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ամսական, և տարեկան պարբերականությամբ հավաքվող ամփոփ տվյալներն են:
0.7	Տվյալների հավաքման	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես

	իրավական լիազորությունը	նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեալոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեալոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
<b>1 Բովանդակություն</b>		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Ճանապարհատրանսպորտային պատահարներ ցուցանիշն ընդգրկում է ՃՏՊ-ների քանակի և դրանց հետևանքով տուժածների թվաքանակների ցուցանիշները:</p> <p>Ճանապարհատրանսպորտային պատահարների պետական հաշվառումն իրականացվում է դրանց առաջացման պատճառների ու պայմանների ուսումնասիրման և վերացման, ինչպես նաև հետևանքների ծանրության աստիճանի նվազեցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու նպատակով:</p> <p>Պետական հաշվառման ենթակա են բոլոր ճանապարհատրանսպորտային պատահարները:</p> <p>Ճանապարհատրանսպորտային պատահարների պետական հաշվառումն իրականացվում է ՀՀ ԿԱ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից:</p> <p>Ճանապարհատրանսպորտային պատահարը համարվում է հաշվառված, եթե դրա վերաբերյալ տվյալները գրանցվել են ճանապարհատրանսպորտային պատահարների տարածքային հաշվառման մատյանում: Ճանապարհատրանսպորտային պատահարների տարածքային հաշվառում իրականացնող ծառայողն առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ (Երևան քաղաքում՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ) կատարում է ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով տուժած անձանց տվյալների համեմատություն բժշկական կազմակերպություններում գրանցված տվյալների հետ:</p> <p>Համեմատություններ կատարելու ընթացքում հայտնաբերված հաշվառումից դուրս մնացած ճանապարհատրանսպորտային պատահարների հաշվառումն իրականացվում է նույն կարգով:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><i>Հիմնական հասկացություններ</i></p> <p><b>Ճանապարհատրանսպորտային պատահար՝</b> ճանա-պարհով տրանսպորտային միջոցի շարժման ընթացքում և դրա</p>

		<p>մասնակցությամբ առաջացած դեպք, որի հետևանքով զոհվել կամ վիրավորվել են մարդիկ կամ վնասվել են տրանսպորտային միջոցներ, բեռներ, կառույցներ կամ պատճառվել է այլ նյութական վնաս:</p> <p><b>Ճանապարհային երթևեկություն`</b> տրանսպորտային միջոցով կամ առանց դրա ճանապարհով մարդկանց տեղաշարժման և (կամ) բեռների փոխադրման ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունների համակարգ:</p> <p><b>Վիրավոր`</b> ՃՏՊ հետևանքով մարմնական վնասվածք ստացած անձ, որով պայմանավորվում է նրա հետագա հոսպիտալացումը կամ ամբուլատոր բուժման անհրաժեշտությունը:</p> <p><b>Զոհված`</b> ՃՏՊ հետևանքով մահացած անձ: Զոհված են հաշվառվում այն անձանց տվյալները, որոնք մահացել են պատահարը տեղի ունենալու օրվանից 30 օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատահարը տեղի է ունեցել հաշվետու տարում, սակայն տուժածը մահացել է հաշվետու տարվա տվյալների ամփոփման վերջնաժամկետից հետո:</p> <p><b>Հետիոտն`</b> տրանսպորտային միջոցից դուրս` ճանապարհի վրա գտնվող անձ, բացառությամբ ճանապարհի վրա աշխատանքներ իրականացնելու իրավասություն ունեցող և օրենսդրությամբ սահմանված կարգով այդ աշխատանքներն իրականացնող անձի: Հետիոտնին հավասարեցվում է առանց շարժիչի հաշմանդամային սայլակով տեղաշարժվող, հեծանիվ, մոպեդ, մոտոցիկլետ տանող կամ բեռնասայլակ, սահնակ, մանկասայլակ կամ հաշմանդամային սայլակ քաշող անձը, ինչպես նաև շարժիչով հաշմանդամային սայլակով հետիոտնի արագությամբ տեղաշարժվող հաշմանդամը:</p> <p><b>Ոչ սթափ վիճակ`</b> ակոհոլային խմիչքի, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործմամբ պայմանավորված մարդու ֆիզիկական և (կամ) հոգեկան վիճակ, որի դեպքում տրանսպորտային միջոց վարելն առաջացնում է վարչական պատասխանատվություն:</p> <p><i>Աշխարհագրական ընդգրկունություն</i></p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետությունը: <i>Հրապարակման խմբավորումներ</i></p> <p>Տվյալները հրապարկվում են ըստ տուժվածների տեսակների` զոհվածներ և վիրավորվածներ, ճանապարհային երթևեկության կանոնների (ՃԵԿ) խախտման պատճառների` վարորդներ և</p>
--	--	--

		հետիոտներ, ինչպես նաև չբացահայտված ՃՏՊ-ներ:
<b>2. Ժամանակայնություն</b>		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական, տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամսական տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը, իսկ տարեկան ցուցանիշները՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 4-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Ամսական, տարեկան
<b>3. Ճշգրտություն</b>		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում: Հետազոտությունը հիմնված է վարչական ռեգիստրի դիտարկումների վրա:
3.2	Անճշտության աղբյուրները	Անճշտության աղբյուր առկա չէ:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ներկայացված տվյալների ճշգրտությունն իրականացվում է նախորդ տարի տվյալ ժամանակահատվածի համար ներկայացված համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով:
<b>4. Համադրելիություն</b>		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Տվյալները ժամանակագրական առումով համադրելի են:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության հետ համադրելիություն առկա չէ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հրապարակված տվյալները համարվում են վերջնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են համապատասխան ճշգրտումներով և բացատրական ծանոթագրություններով:
<b>5. Մատչելիություն</b>		
5.1	Տարածման ձևաչափ	<p><b>Ամսական հրապարակումներ</b></p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն):</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալները հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն)</p> <p><b>Տարեկան հրապարակումներ</b></p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն):</p>

		<p>«Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):</p> <p><b>Տվյալների բազաներ</b></p> <p><a href="http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</a></p> <p><b>Ինտերնետային հասցե</b></p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. <a href="http://www.armstat.am/am/?nid=82">http://www.armstat.am/am/?nid=82:</a></p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Այլ տեղեկատվություն	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=373">https://www.armstat.am/am/?nid=373:</a>
5.4	Այլ տեղեկատվություն	Ճանապարհատրանսպորտային պատահարների հիմնական ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը զետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2019թ. մայիսի 24-ի ««Ճանապարհատրանսպորտային պատահարների մասին» Ձև 35-պատահար (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 31-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ում:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: